

ընտրութիւնը և Սիւնհոգոսը՝ նրա տաճկահայոց համար գայթակ-
ղութեան քար էր դարձել, իբրև Հայաստանեայց եկեղեցւոյ հո-
գոսանի տի իրաւունքները սահմանափակող մի հաստատութիւն:

(Եւրո-նալիս)

Յ. Վ. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի՞ՆՉ Է ԲԱՂԴԸ:

Քրիստոս ճշմարտութիւն է ուսուցանում, և եթէ ճշմարտութիւնը վերա-
ցական ճշմարտութիւն է՝ նա իրականութեան մէջ էլ ճշմարտութիւն կլինի:
Եթէ կեանքը աստուածութեան մէջ միայն ճշմարտ կեանք է, ինքն ըստ
ինքեան երանելի, նա ճշմարտ է՝ երանելի է և այստեղ՝ երկրի վերայ
կեանքի կարելի դիպուածներում:

Քրիստոս լաւից գէղի վատը չի հրապարում, այլ հակառակը՝ վատից
դէպի լաւը: Նա խղճումէ մարդկանց վերայ, որոնք շուարած կորուստի են-
թարկուած և առանց հովուի՝ ոչխարներ են ներկայացնում ուստի և խոս-
տանում են ողորդ հովու և լաւ արօտստեղի: Նա ասում է թէ իւր աշակերտ-
ները պէտք է հաւածուին իւր վարդապետութեան համար և պէտք է համ-
բերեն և անյողդողդ տանեն աշխարհիս հաւածանքներին: Բայց Քրիստոս
չի ասում թէ՝ հետեւելով իւր վարդապետութեանը, նոքա աւելի կարօտու-
թիւն կը քաշեն քան հետեւելով աշխարհիս վարդապետութեանը: Նա ասու-
մէ թէ նոքա, որոնք կը հետեւեն աշխարհիս վարդապետութեանը, դժբաղդ
կրկինն իսկ որոնք կը հետեւեն իւր վարդապետութեանը՝ երանելի եղ
ներից աւելի քաղդաւոր կրկինին:

Քրիստոս, սկսելով իւր վարդապետութիւնը, ասում է մարդկանց թէ՝ կա-
տարելով իւր վարդապետութիւնը, նաև չկատարողների մէջ նոքա դորանով
առաջուանից աւելի դժբաղդ չեն լինիլ: Այլ՝ ընդհակառակը՝ չը կատարող
ներից աւելի քաղդաւոր կրկինին:

Քրիստոս՝ յիրաւի՝ յիշում է թէ նոքա, որոնք կրկին իրան, կը հալա-
ծուեն նոցանից՝ որոնք չեն լսի իրան, բայց նա չի ասում թէ աշակերտ-
ները դորանից կորուստ կունենան:

Թէ Քրիստոս ասում է և մտածում է այս, սորա մէջ չի կարող տարակու-
սանք լինել, այս ակնյայտի է և նորա պարզ բառերից այս հարցի մասին,
և նորա վարդապետութեան իմաստից, և նորանից՝ ինչպէս ապրում է իւր
աշակերտները:

Քննելով վերացականապէս այն հարցը՝ թէ որ վիճակը լաւ կրկինի Քրիս-
տոսի աշակերտներինը՝ թէ աշխարհի աշակերտներինը՝ չի կարելի չը տես-
նել, որ Քրիստոսի աշակերտների վիճակը պէտք է լաւ լինի, արդէն նորա

Համար, որ Քրիստոսի աշակերտները ամենքին բարութիւն անելով, մարդկանց մէջ նախանձ չեն գրգռիլ:

Քրիստոսի աշակերտները, ոչ դքի չարութիւն չանելով, կարող են հաւածուիլ միայն չար մարդկանցից. իսկ աշխարհի աշակերտները պէտքէ հաւածուին ամենքից, որովհետեւ աշխարհի աշակերտների կենցաղավարութեան օրէնքը կռուի օրէնք է, այսինքն միմեանց հալածելու: Թշուառութիւններ կարող են պատահել թէ մէկին և թէ միւսին, այն տարբերութեամբ, որ Քրիստոսի աշակերտները, պատրաստ կրլինին տառապանքներին. իսկ աշխարհի աշակերտները բոլոր ջանքով գուն կը գործեն խոյս տալ նորանցից, և Քրիստոսի աշակերտները տառապելով, պէտք է կարծեն թէ նոցա տառապանքները աշխարհի համար անխուսափելի են. իսկ աշխարհի աշակերտները չեն իմանալ թէ ինչո՞ւ են տառապում: Վերացականապէս դատելով՝ Քրիստոսի աշակերտների վիճակը շահաւէտ է քան աշխարհի աշակերտների վիճակը:

Այս ստուգելու համար՝ թող ամեն ոք յիշէ իւր կեանքի դժուար րօպէները, բոլոր մարմնական և հոգեկան տառապանքները, որ կրել է և կրումէ՝ և թող հարցնէ իրան՝ յանուն ինչի՞ տանումէր նա այս դժբաղդութիւններին, յանուն արխարհի՞ թէ Քրիստոսի վարդապետութեան: Թող իւրաքանչիւր անկեղծ մարդ լաւ յիշէ իւր կեանքը և նա կը տեսնէ, որ երբէք ոչ մի անգամ չի նեղուել Քրիստոսի վարդապետութիւնը կատարելուց. այլ իւր կեանքի դժբաղդութիւնների մեծ մասը յառաջացել է միայն նորանից, որ նա՝ հակառակ իւր ձգտողութեանը՝ հետեւել է իրան կաշկանդող աշխարհի վարդապետութեանը:

Բացառապէս աշխարհի իմաստով առած՝ իմ բաղդաւոր կեանքի մէջ ըստ աշխարհի վարդապետութեան ես կունենամ այնքան տառապանքներ, որքան չի ունենալ յանուն Քրիստոսի մի նահատակուածը: Իմ կեանքի բոլոր ամենաթանր րօպէները, սկսած ուսանողական արրեցողութիւնից և զեղխութիւնից մինչև մենամարտութիւնը, պատերազմը՝ և մինչև այն անառողջութիւնը և այն անրնական տաժանելի կեանքի պայմանները, որոնց մէջ ես ապրումս, այս բոլորը նահատակութիւն է աշխարհի վարդապետութեան համար:

Այս ես խօսումս՝ տակաւին՝ բացառապէս աշխարհային իմաստով բաղդաւոր կեանքի վերայ: Սակայն որքան են նահատակները, որոնք տառապել են և տառապում են աշխարհի վարդապետութեան համար այնպիսի տառապանքներով, որ ես երեւակայել անգամ չեմ կարող:

Մենք չենք տեսնում աշխարհի վարդապետութիւնը կատարելու դժուարութիւնները և վտանգները միայն այն պատճառով, որ մենք կարծում ենք թէ այս բոլորը՝ ինչ որ մենք տանում ենք նորա համար՝ անհրաժեշտ է:

Մենք հաւատացած ենք՝ թէ բոլոր դժբաղդութիւնները՝ որ մենք մեղ պատճառում ենք, անհրաժեշտ պայմաններ են մեր կեանքի համար. ուստի մենք չենք կարող հասկանալ թէ Քրիստոս ուսուցանում է ինչպէս ազատուել մեր դժբաղդութիւններից և երջանիկ ապրել:

Որպէս զի մենք կարող լինինք քննադատել այն հարցը՝ թէ ո՞ր կեանքն է բաղդաւոր։ մենք պէտք է մտաւորապէս հրաժարուենք այս կեղծ մտապատկերից և առանց նախազգած մտքի նայենք մեր վերայ և մեր չորս կողմը։

Անցէք մարդկան գրոհի միջով, մանաւանդ քաղաքացիների՝ և նայեցէք այս յոգնած, անհանգիստ, հիւանդ դէմքերին՝ և յետոյ յիշեցէք ձեր կեանքը և այն մարդկանց կեանքը, որի մանրամասնութիւններին յաջողուել է ձեզ ծանօթանալ։ մտաբերեցէք բոլոր այն բռնի մահերը՝ բոլոր այն անձնասպանութիւնները՝ որոնց մասին դուք լսած էք՝ և հարցրէք՝ յանուն ինչի՞ են այս աղէտները, մահերը և յուսահատութիւնները, որոնք անձնասպանութեան են հասցնում։ Եւ դուք կըտեսնէք, որքան էլ տարօրինակ թուի այս սկզբից՝ թէ մարդիկ իրանց աղէտների իննը տասներորդ մասը կորուսին յանուն աշխարհի վարդապետութեան, թէ բոլոր այս աղէտները հարկաւոր չեն և կարող են չլինել, և թէ մարդկան մեծամասնութիւնը այս աշխարհի վարդապետութեան նահատակներ են։

Այս օրերս՝ մի աշնան անձրևային կիւրակէ՝ ես անցայ ձիաքարշ երկաթուղու հրապարակով որ գտնվումէ Սուխարեվա բաշնեա կոչուած տեղում։ կէս վերստի վերայ կառքը ճեղքումէր մարդկանց խիտ ամբոխը, որ յետոյ կրկին միանումէր։ Առաւօտից մինչև երեկոյ այս հազարաւոր մարդիկը, որոնցից բազմամասնութիւնը սոված և ցնցոտի են հագնուած՝ այստեղ ցեխի մէջ շրջումեն՝ յիշոց տալով՝ խաբելով և ատելով միմեանց։ Նոյնը լինումէ քաղաքիս միւս շուկաներում։ Երեկոյ այս մարդիկը անցնումեն գինեւաններում և պանդոկներում։ Գիշերը իրանց անկիւններում և և բուններում։ Ահւրակէն նոցա համար շաբաթուայ մէջ ամենալաւ օրն է։ Երկուշաբթի օրուանից՝ իրանց վարակուած բուններում՝ նոքա կրկին կըսկսեն իրանց չըսիրած աշխատանքը։

Խորհեցէք այս մարդկանց կեանքի վերայ՝ այն վիճակի վերայ, որը թողել են նոքա՝ այս վիճակը ընտրելու, որի մէջ իրանք իրանց դրել են։ Խորհեցէք այն անխոնջ աշխատանքի վերայ, որ կատարումեն այս մարդիկը՝ տղամարդիկը և կինարմատները և դուք կըտեսնէք թէ սոքա կատարեալ նահատակներ են։

Բոլոր այս մարդիկը թողել են տները՝ գաշտերը՝ հայրերին՝ եղբայրներին, շատ անգամ կանանց և երեխաներին։ հրաժարուել են ամեն բանից, մինչև անգամ կեանքից և եկել են քաղաք հայթոյթելու այն բանը՝ ինչ որ աշխարհի վարդապետութեամբ կարեւոր է համարվում իւրաքանչիւրի համար։ Եւ սոքա ամենքը՝ չըխօսելով այն տասնեակ հազարաւոր թշուառ մարդկանց վերայ, որոնք կորցրել են ամեն բան և հազիւ պահպանումեն իրանց կեանքը քաղերթով և արաղով գիշերային օթարաններում, ամենքը՝ սկսելով գործաւորից, կառապանից, կարուհուց, պոռնկից, մինչև հարուստ վաճառականը և առտիճանաւորը և իրանց կանայքը, ամենքը վարումեն ծանր անբնական կեանք և չեն ստացել այն՝ ինչ որ կարեւոր է համարվում աշխարհի վարդապետութեամբ։

Արտնեցէք այս մարդկանց մէջ և գտէք՝ աղքատից մինչև հարուստ՝ մի մարդ, որ բաւականաչափ ունենար այն՝ ինչ որ կարեւոր, անհրաժեշտ է համարվում աշխարհի վարդապետութեամբ, և դուք կրտսենէք որ հազարից մէկ մարդ չէք գտնի։ Եւրաքանչիւր մարդ ճիգն է թափում ստանալու այն բանը՝ ինչ որ իրան հարկաւոր չէ՝ և ինչ որ պահանջումէ նոցանից աշխարհի վարդապետութիւնը, և որի չբլինելը դժբաղդութիւն է նորա համար։ Եւ հէնց որ նա ստանայ այն՝ ինչ որ պահանջվումէ, նորանից կրպահանջուի էլի մի ուրիշ բան և էլի միւս բան, և այսպէս անվերջ շարունակվումէ Սիդիֆեան գործը որ մաշումէ մարդկանց կեանքերը։ Վեր կալէք կարողութեան աւտիճանները՝ սկսած այն մարդկանցից՝ որոնք ծախսումեն 300 ուրբի տարին, և մինչև այն մարդիկը, որոնք ծախսումեն յիսուն հազար ուրբի, և դուք հազիւ կը գտնէք մի մարդ որ չարչարուած, յոգնած չբլինի աշխատանքից 400 ուրբի հոտանալու՝ երբ նա ունի 300 ո. և 500 ո. երբ նա 400 ո. ունի, և այսպէս անվերջ։ Եւ չը կայ մի մարդ, որ ունենալով 500 ուրբ, յօժար կամքով 400 ուրբի ունեցողի կեանքը վարէր։ Եւ եթէ կան այդպիսի օրինակներ, այս փոփոխութիւնն էլ նա անումէ ոչ թէ իւր կեանքը թնթեացնելու համար՝ այլ փող ժողովելու և պահելու։ Ամենքը կարեւոր են համարում աւելի և աւելի ծանրաբեռնել իրանց՝ առանց այն էլ ծանրաբեռնած կեանքը, և իրանց հոգին անխայարար նուիրել աշխարհի վարդապետութեանը։ Այսօր ճարել է կապայ և կրկնակօշիկ է դուց ժամացոյց շղթայով միւս օրը կացարան բազմոցով և լապտերով։ յետոյ գորգեր հիւրասենեակի համար և թաւշեայ զգեստներ։ յետոյ տուն, արագավազ ձիեր, պատկերներ ոսկէ շրջանակով։ յետոյ հիւանդացաւ՝ ուժից դուրս աշխատելով՝ և մեռաւ։ Միւսը շարունակումէ նոյն գործը և նոյնպէս նուիրումէ կեանքը նոյն կուռքին։ Նոյնպէս մեռնումէ և չէ իմանում ինքը՝ թէ ինչու համար է այս բոլորը անում։ Բայց՝ գուցէ իսկ այս կեանքը յընթացս որոյ մարդս բոլորը անումէ՝ ինքն ըստ ինքեան երջանիկ է։

Համեմատեցէք այս կեանքը այն բանի հետ, ինչ որ մարդիկ բաղդ են կոչում և դուք կրտսենէք՝ որ այս կեանքը սարսափելի թշուառ է։ Արդարեւ՝ որոնք են երկրային բաղդաւորութեան գլխաւոր պայմանները որոնց վերայ ոչ ոք չի վիճիլ։

Առաջնակարգ և ամենքից ընդունուած բաղդաւորութեան պայմաններից մէկն է այն կեանքը, երբ մարդուս բնութեան հետ ունեցած կապը չի խանգարուած՝ այսինքն կեանքը բաց երկնքի տակ՝ արեւի լուսում՝ մաքուր օդի մէջ։ Երկրի՝ բոյսերի և կենդանիների հետ հաղորդուելով։ Միշտ բոլոր մարդիկ այս զրկանքը մեծ դժբաղդութիւն են համարել։ Բանտարկեալները այս զրկանքը զգումեն առաւելապէս։ Նայեցէք աշխարհի վարդապետութեամբ ապրող մարդկանց կեանքի վերայ։ Որքան՝ աշխարհի վարդապետութեան համաձայն՝ աւելի յաջողութիւն են ունեցել, այնքան աւելի զրկուած են եղել բաղդաւորութեան այս պայմանից։ Որքան բարձր է աշխարհային

երջանկութիւնը՝ որին հասել են նոքա, այնքան էլ քիչ են տեսնում արեւի լոյսը, դաշտերը և անտառները վայրի և ընտանի կենդանիներին։ Հատերը նոցանից և դրեթէ բոլոր կանայք՝ հասնում են ծերութեան, մէկ կամ երկու անգամ տեսնելով արեւի ծագումը և առաւօտը, և ոչ մի անգամ չլսեմներով դաշտերը և անտառները այլապէս՝ բայց միայն իրանց կառքից կամ վագօնից, և ոչ միայն չըցանելով և չըտնկելով մի բան, չըկերակրելով և չըմեծացնելով ոչ մի ձի, ոչ մի հաւ, նաեւ հասկացողութիւն անգամ չունենալով թէ ինչ պէս են ծնվում, մեծանում և ապրում կենդանիները։ Այս մարդիկը տեսնում են միայն անկուածներ, քարեր, փայտեր՝ մտրդկային աշխատանքով յարգարած՝ և այն էլ ոչ արեւի լուսով, այլ արուեստական լուսի տակ։ Նոքա լսում են միայն մեքենաների, կառքերի թնդանօթների և երաժշտական գործիքների ձայնը։ Հոտոտում են սպիրտի բուրմունքներ և ծխախոտի ծուխը։ Նոցա ոտերի և ձեռքերի տակ միայն անկուածներ են՝ և փայտօտամոքսի թուլութեան պատճառաւ նոքա ուտում են հին և հոտած պաշարեղէն։ Տեղափոխութիւնը չի փրկում նոցա այս զրկանքից։ Նոքա ճանապարհորդում են փակած արկղների մէջ։ Գիւղի մէջ և արտասահմանում, ուր նոքա գնում են նոցա ոտերի տակ նոյն քարերն և փայտն են՝ նոյն վարագոյրները, որոնք ծածկում են նոցանից արեւի լոյսը, նոյն ծառաները, կառապանները և դռնապանները՝ որոնք չեն թոյլ տալիս հողի բոյսերի և կենդանիների հետ հաղորդակցութիւն ունենալու։ Աւր որ և լինին, նոքա զրկուած են՝ բաղդաւորութեան այս պայմաններից՝ ինչպէս բանտարկեալները։ Ինչպէս բանտարկեալները մխիթարվում են բանտի դռանը բուսած խոտով, սարգով և մուկով՝ այնպէս էլ այս մարդիկը մխիթարվում են երբեմն սենեակի հիւծեալ բոյսերով՝ թութակով, շնով կապիկով, որոնց էլի իրանք չեն մեծացնում և կերակրում։

Բաղդաւորութեան միւս անհրաժեշտ պայմանը է աշխատանքը՝ նախ սիրելի և ազատ աշխատանքը, երկրորդ ֆիզիքական աշխատանքը՝ որ տալիս է ախորժակ, խոր և հանգիստ քուն։ Դարձեալ՝ որքան իրանց հասկանալովը, աւելի մեծ բաղդաւորութեան են հասել աշխարհի վարդապետութեան համաձայն, այնքան աւելի զրկուած են բաղդաւորութեան այս միւս պայմանից։ Աշխարհի բոլոր բաղդաւորները՝ աստիճանաւորները և հարուստները, կամ իրրեւ բանտարկեալներ՝ բոլորովին զրկուած են աշխատանքից և անյաջողաբար կռվում են հիւանդութիւնների հետ որոնք յառաջանում են ֆիզիքական աշխատանք չըլինելուց ևս աւելի անյաջողաբար կռվում են տաղակութեան հետ որ նոցա յաղթահարում են (կստում են) անյաջողաբար՝ որովհետեւ աշխատանքը այն ժամանակ միայն ուրախուլի է, երբ նա անտարակոյս կարեւոր է, բայց նոցա ոչինչ չի հարկաւոր)։ Կամ հատարում են իրանց համար ատելի աշխատանք՝ ինչպէս սեղանաւորները, պրօկորօրը և նոցա նմանները, որոնք զարդարում են հիւրասենեակներ, առօթներ, զգեստներ իրանց երեխաների համար, (կստում են ատելի՝ որովհետեւ երբեք չեն պատահած սոցանից մի մարդու, որ գովէր իւր գործը

և կատարէր գէթ այնպիսի բաւականութեամբ, որով դռնապանը մաքրումէ տան առաջի ձիւնը)։ Բոլոր այս բաղդաւոր մարդիկը կամ զրկուած են աշխատանքից կամ կապուած են չըսիրած աշխատանքի հետ։ այսինքն գլտնվումեն այն վիճակի մէջ, որի մէջ գտնվումեն տաժանակիր աշխատանքների դատապարտեալները։

Բաղդաւորութեան երրորդ անկասկածելի պայմանը է ընտանիքը։ Եւ դարձեալ՝ որքան մարդիկ յառաջ են գնացած աշխարհային յաջողութիւններում, այնքան պակաս մատչելի է այս բաղդաւորութիւնը։ Մեծամասնութիւնը շնացողներ են և գիտակցաբար հրաժարվումեն ընտանեկան ուրախութիւնից։ Հնազանդուելով միայն ընտանիքի անյարմարութիւններին, Եսկեթէ և շնացող չեն նոքա, սակայն երեխաները նոցա համար ցնծութիւն չեն այլ բեռը։ Եւ եթէ նոքա ունեն երեխաներ, նոցա հետ յարաբերութիւն ունենալու ուրախութիւնից զրկուած են։

Նոքա իրանց օրէնքներով երեխաներին պէտք է տան օտարներին՝ շատ անգամ բոլորովին օտարներին՝ նախ օտարազգիներին, յետոյ դաստիարակներին, այնպէս որ ընտանիքից ունեն միայն վիշտ՝ այսինքն երեխաներ, որոնք մանկութիւնից դառնումեն նոյնպէս դժբաղդ, ինչպէս ծնողները և որոնք՝ ծնողների վերաբերութեամբ՝ ունեն մի զգացողութիւն՝ այն է՝ նոցա մահ ուզելը, որ ժառանգեն նոցա*)։ Նոքա բանտարկուած չեն, սակայն ընտանիքի վերաբերութեամբ իրանց կեանքի հետեանքը տառապելի է այն ընտանեկան զրկանքով, որին ենթարկուած են բանտարկուածները։

Բաղդաւորութեան չորրորդ պայմանը է ազատ, սիրալիր յարաբերութիւն ունենալը աշխարհի բոլոր զանազան մարդկանց հետ։ Եւ դարձեալ՝ որքան բարձր աստիճանի են հասած մարդիկ աշխարհում, այնքան աւելի զրկուած են բաղդաւորութեան այս գլխաւոր պայմանից։ Որքան բարձր է մարդկանց դիրքը՝ այնքան նեղ է և սղմուած այն մարդկանց շրջանը, որոնց հետ կարելի է հաղորդակցութիւն ունենալ և այնքան ստոր են իրանց մտաւորական և բարոյական զարգացմամբ այն մի քանի մարդիկը, որոնք կազմումեն այն կախարդական շրջանը, որից դուրս գալը չըկայ։ Ռամկի և նորա կնոջ համար արձակ է հաղորդակցութիւնը ամբողջ մարդկանց հետ՝ եթէ մէկ միլիօն մարդ չի ուզում նորա հետ հաղորդակցութիւն ունենալ, նորա հա-

(*) Շատ զարմանալի է այսպիսի կեանքի արդարացումը, որ լսումես ծնողներից՝ «ինձ ոչինչ հարկաւոր չէ, առումէ ծնողը, ինձ համար այս կեանքը բեռն է, բայց երեխաներիս սիրելով, ես անւումս այս նոցա համար»։ Այսինքն՝ հո՛ւ անկասկած՝ փորձով գիտեմ, որ մեր կեանքը երջանիկ չէ, ուստի ես կրթումեմ երեխաներիս այնպէս, որ նոքա նոյնպէս բաղդաւոր չըլինին, ինչպէս ես։ Եւ այդ պատճառաւ սիրելով՝ նոցա բերումեմ քաղաք, որ լիքն է ֆիզիքական եւ բարոյական սիրով, տալիս եմ օտար մարդկանց ձեռքը, որոնք դաստիարակութեան մէջ միայն շահասիրական նպատակ ունին՝ եւ ֆիզիքապէս եւ բարոյապէս, եւ մշտնջենաւորապէս ջանասիրութեամբ վնասումին երեխաներիս, եւ այս դատողութիւնը ծնողների՝ իրանց անխոհեմ կեանքի արդարացումը պէտք է լինի։

մար մնումն 80 միլիոն բանաւոր մարդիկ, ինչպէս ինքը որոնց հետ նա՝ սկսած երկրի մի ծայրից մինչև միւս ծայրը, ոչ սպասելով այցելութեան և և ներկայացման՝ իսկոյն մտնումէ ամենամօտ եղբայրական յարաբերութեան մէջ, Աստիճանաւորի համար իր կնոջ հետ կայ հարիւր մարդ հաւասար իրան, բայց բարձրագոյնները չեն թողնում նոցա իրանց մօտ, իսկ ստորագոյնները կտրուած են նոցանից, Աշխարհային՝ հարուստ մարդու և նորա կնոջ համար կայ տասնեակ աշխարհային ընտանիք, մնացածը կտրուած է նորանից, Նախարարի և հարուստի և իրանց ընտանիքների համար կայ մի տասնեակ նոյնպէս նշանաւոր կամ հարուստ մարդիկ, ինչպէս իրանք են, Մի՞թէ այս բանտարկութիւն չէ, երբ բանտարկեալի համար կարելի է երկու երեք բանտապետների հետ միայն հաղորդակցութիւն ունենալ:

Աւերջապէս՝ բաղդաւորութեան հինգերորդ պայմանը է առողջութիւնը և անվիշտ մահը, Եւ դարձեալ՝ ո՛րքան մարդիկ հասարակութեան աստիճանների վերայ դարձր են, այնքան աւելի զրկուած են բաղդաւորութեան այս պայմանից, Աւր կալէք միջին հարուստին և նորա կնոջը, չընայելով սովածութեանը և անչափ աշխատանքին, որ տանումէ գիւղացին, և բաղդատեցէք իրար հետ, Եւ դուք կըտեսնէք, թէ ուրքան ստոր են գիրքով այնքան աւելի առողջ են, և որքան բարձր են, այնքան աւելի հիւանդոտ՝ տղամարդիկ և կանայք, Մի առ մի համարեցէք ձեր յիշողութեան մէջ այն հարուստներին և իրանց կանանց, որոնց ճանաչումէք՝ և ծանօթ էիք, և դուք կըտեսնէք՝ որ մեծամասնութիւնը հիւանդ է, Սոցանից առողջ մարդը, որ չի բժշկվում մշտապէս կամ պարբերաբար ամառը, այնպէս բացառութիւն է, ինչպէս հիւանդը բանւորների փասակարգում: Այս բոլոր բաղդաւորները՝ առանց բացառութեան՝ սկսումն օնանակութեամբ, որ իրանց կացութեան մէջ դառնումէ զարգացման բնական պայման, Ամենքը լինումն անատամ, ալեոր և ճաղատ այն տարիքներում, երբ բանւոր մարդը նոր սկսումէ ուժ առնել, Գրեթէ ամենքը տկարացած են ջղերի, ստամոքսի և ծննդական գործարանների հիւանդութեամբ որկրամոլութիւնից, արբեցութիւնից, զեղխութիւնից և բժշկուելուց, և նոքա, որոնք չեն մեռնում մատաղ հասակում, իրանց կեանքի կէսը անց են կացնում բժշկուելով՝ և բնափիտն սրսկելով՝ կամ թէ իրրե ուռած խեղանդամ մարդիկ, որ ընդունակ չեն ապրել իրանց միջոցներով, այլ միայն կարող են ապրել՝ իբրե պարագիտներ՝ կամ այն միջիւնները, որոնց կերակրումն իրանց ստրուկները, Մի առ մի հաշուեցէք նոցա մահերը՝ ով հրացանադարկ է եղել, ով փտել է գաղղիական ախտից, Մէկը միւսի ետեից կորչումն յանուն աշխարհի վարդապետութեան, Եւ ամբոխները գնումն նոցա ետեից և՛ ինչպէս նահատակներ՝ որոնումն աղէտներ և կորուստներ:

Մի կեանքը միւսի ետեից ընկնումէ այս աշխարհի կառքի տակ՝ կառքը անցնումէ փեռեկելով նոցա կեանքը, միշտ նոր՝ և նոր զոհեր՝ կականով, և լացով, և անէծքներով թափվումն նորա տակ:

Քրիստոսի վարդապետութեան կատարելը դժուար է, Քրիստոս ասումէ

Թէ ով ուզումէ հետեւել ինձ, թող թողնի տունը, դաշտերը, եղբայրներին և դայ իմ՝ Աստուծոյ ետեւից. և նա կըստանայ այս աշխարհում հարիւր անգամ աւելի տներ, դաշտեր, եղբայրներ և՛ բացի սորանից՝ յաւիտենական կեանք: Եւ ոչ ոք չի գնում: Իսկ աշխարհի վարդապետութիւնը ասել է՝ թող տունդ, դաշտերը, եղբայրներդ, գնա փտած քաղաքը: Եւ ոչ ոք չի ասում թէ այս դժուար է: Ոչ միայն նոքա, որոնք տառապումն, այլ և հայրերը և մայրերը չեն ասում թէ այս դժուար է: Նոքա մինչև անգամ իրանք խորհուրդ են տալիս երեխաներին գնալ: Նոքա կարծումն թէ ոչ միայն այս պէտք է լինի այսպէս և թէ այլապէս կարելի չէ, այլ նաև լաւ և բարոյական է:

Վարելի էր հաւատալ թէ Քրիստոսի վարդապետութեան կատարելը դժուար, և սարսափելի, և աղետալի է, եթէ աշխարհի վարդապետութեան կատարելը շատ դիւրին, անվտանգ և ակործելի լինէր: Բայց աշխարհի վարդապետութիւնը աւելի դժուար վտանգաւոր և վշտագին է քան Քրիստոսի վարդապետութեան կատարելը:

Ասումն են եղել են երբեմն՝ Քրիստոսի նահատակներ, բայց այս բացառութիւն էր. նոցա թիւը հասցնումնք 1800 տարուայ ընթացքում՝ մինչև 380 հազարի. սակայն հաշուեցէք աշխարհի նահատակների թիւը, և Քրիստոսի մէկ նահատակին՝ աշխարհի վարդապետութեան 1000 նահատակ կըգայ, որոնց տառապանքները 100 անգամ աւելի սարսափելի են: Միայն այս դարում պատերազմների մէջ սպանուածների թիւը հաշոււմն քառասուն միլիոն մարդ:

Այս բոլորը աշխարհի վարդապետութեան նահատակներ են, որովհետեւ եթէ մարդկութիւնը հետեւէր Քրիստոսի վարդապետութեանը, մարդիկ միմեանց չէին սպանիլ: Բաւական է միայն՝ որ մարդ չըհաւատայ աշխարհի վարդապետութեանը՝ թէ հարկաւոր է հագնել կրկնակոշիկներ և շղթայ, և ունենալ անպէտք հիւրասենեակ, և թէ պէտք չի անել բոլոր այն յիմարութիւնները, որը պահանջումէ նորոտից աշխարհը, և նա չի իմանալ ուժից վեր աշխատանք և առապանք և մշտական հոգս, և աշխատանք առանց հանգստութեան և նպատակի, զրկուած չի լինիլ ընտելութեան հետ հաղորդակցութիւն ունենալուց, զրկուած չի լինիլ սիրած աշխատանքից ընտանիքից և չի կորչիլ անմիտ կերպով տաժանելի մահից:

Նահատակ պէտք չի լինել յանուն Քրիստոսի, այս չի ուսուցանում Քրիստոս: Նա ուսուցանումէ թէ ինչպէս մարդ դադարի չարչարել իրան յանուն աշխարհի սուտ վարդապետութեան:

Քրիստոսի վարդապետութիւնը ունի խորին՝ բնազանցական իմաստ: Քրիստոսի վարդապետութիւնը ունի հանրամարդկային իմաստ: Քրիստոսի վարդապետութիւնը ունի ամենահասարակ, պարզ, գործնական իմաստ իւրաքանչիւր մարդու համար առանձին առած: Այս իմաստը կարելի է արտայայտել այսպէս՝ Քրիստոս ուսուցանումէ՝ որ մարդիկ յիմարութիւն չանեն: Այս է Քրիստոսի վարդապետութեան ամենահասարակ՝ ամենքին մատչելի իմաստը:

Քրիստոս ասումէ՝ մի բարկանար, մի համարիր ոչ ոքին քեզանից ստոր՝ այդ յիմարութիւն է։ Արարկանաս, կըվշտացնես մարդկանց՝ քեզ վատ կըլինի։ Ասումէ ևս՝ չարեաց փոխարէն չարիքով մի հատուցանի, որովհետեւ չարը կըդառնայ փոքր աւելի ևս չար՝ քան առաջ, ինչպէս մեղրի վերայ կախած թակարդը՝ որ սպանումէ արջին։ Եւ դարձեալ ասումէ՝ մի համարիր մարդկանց օտար միայն նորա համար, որ նոքա քեզանից հեռու, ապրումեն ուրիշ հողի վերայ, և խօսումեն ուրիշ լեզուով։ Եթէ թշնամի կըհամարես նոցա, և նոքա քեզ կըհամարին թշնամի, քեզ վատ կըլինի։ Եւ այսպէս այս բոլոր յիմարութիւնները մի անիլ, և քեզ լաւ կըլինի։

«Այո՛ սորա դէմ ասումեն» «բայց աշխարհս այնպէս է կազմուած՝ որ ընդդիմանալ նորա կազմակերպութեանը աւելի տառապալից է, քան նորա հետ համաձայն ապրելը։ Եթէ մարդ չապահովացնէ իր կեանքը՝ հայթայթելով այն՝ ինչ որ իրան և ընտանիքին հարկաւոր է, ինքն և իւր ընտանիքը կըմեռնեն սովածութիւնից»։ Այսպէս ասումեն մարդիկ, աշխատելով պէտք է պաշտպանել աշխարհի կազմակերպութիւնը, բայց իրանք այդպէս չեն կարծում։ Նոքա այդպէս են ասում միայն, որովհետեւ չեն կարող մերժել Քրիստոսի վարդապետութեան ճշմարտութիւնը, որին իբր թէ իրանք հաւատումեն, և պէտք է արդարանան մի կերպիւ՝ թէ ինչու իրանք չեն կատարում այս վարդապետութիւնը։ Բայց նոքա ոչ միայն այդ չեն կարծում, այլ և երբեք չեն մտածել դորա վերայ։ Նոքա հաւատումեն աշխարհի վարդապետութեանը և միայն հաշվումեն պատճառ բերելով՝ թէ Քրիստոսի վարդապետութիւնը կատարելով՝ հարկաւոր է շատ տառապել, ուստի երբեք չեն էլ փորձել Քրիստոսի վարդապետութիւնը կատարել։ Սենք տեսնումենք անհամար տառապանքներ, որը յանուն աշխարհի վարդապետութեան տանումեն մարդիկ, սակայն յանուն Քրիստոսի վարդապետութեան կրած տառապանքներ մենք մեր ժամանակում երբեք չենք տեսնում։ Երեսուն միլիոն մարդ պատերազմների մէջ կարելի է աշխարհի վարդապետութեան համար, հազարաւոր միլիոններ կորել են աղէտալի կեանքով, աշխարհի վարդապետութեան համար, բայց ոչ միայն միլիոններ, նաեւ հազարներ, նաեւ տասնեակներ, նաեւ մի մարդ չեմ ճանաչում որ կորած լինէր մահով և աղէտալի կեանքով սովից կամ ցրտից Քրիստոսի վարդապետութեան համար։ Այս միայն ծիծաղելի պատճառանք են, որ ապացուցանումէ թէ որչափ անյայտ է Քրիստոսի վարդապետութիւնը։

Քրիստոս կանչումէ մարդկանց ջրի աղբիւրի մօտ, որ գտնվումէ իրանց մօտ։ Մարդիկ պապականւմեն ծարաւով, ուտումեն ցեխ, խմումեն միմեանց արիւնը։ Բայց իրանց ուսուցիչները ասել են իրանց՝ թէ կըկորչեն, եթէ արիւնը, բայց իրանց ուսուցիչները ասել են իրանց՝ թէ կըկորչեն։ Եւ մարդիկ հագնան դէպի այն աղբիւրը, որի մօտ կանչումէ Քրիստոս։ Եւ մարդիկ հատումեն և մեռնումեն ծարաւից՝ ջրից երկու քայլ հեռու՝ չըհամարձակելով մերձենալ նորան։ Բայց բաւական է միայն հաւատալ Քրիստոսին՝ թէ նա բարիք է բերել երկրիս, հաւատալ՝ թէ նա տալիս է մեզ, որ ծարաւի ենք՝ կենդանարար աղբիւրի ջուր, և գալ նորա մօտ տեսնելու՝ թէ ինչպէս

աշխարհի ուսուցիչներն իսկութիւնը նենգամիտ է, և ինչպէս անմիտ են մեր տառապանքները այն ժամանակ՝ երբ մեր փրկութիւնը այնպէս մօտ է, Բաւական է ուղղութեամբ և պարզօրէն ընդունել Քրիստոսի վարդապետութիւնը, որ տեսնենք այն սարսափելի իսկութիւնը, որի մէջ մենք ապրումենք ամենքս և ապրումէ իւրաքանչիւրը մեզանից:

Սերնդից սերունդ մենք աշխատում ենք մեր կեանքը ապահովացնելու բռնաորութեամբ և մեր սեպհականութեան հաստատելովը: Մեր կեանքի յաղդաւորութիւնը մեզ համար կայանումէ ամենամեծ իշխանութեան և ամենամեծ սեպհականութեան մէջ: Մենք այնքան սովոր ենք այս բանին, որ Քրիստոսի վարդապետութիւնը այն բանի համար՝ թէ մարդուս բաղդը չի կարող կախուած լինել իշխանութիւնից և կալուածից, թէ հարուստը չի կարող բաղդաւոր լինել՝ ներկայացնումէ մեր աչքին իւր զոհի պահանջ յանուն ապագայ բարիքի: Քրիստոս չի էլ մտածել կանչել մեզ զոհաբերութեան, նա՝ ընդհակառակը՝ մեզ ուսուցանումէ չանել այն՝ ինչ որ վատ է և անել այն, ինչ որ լաւ է մեզ համար, այստեղ՝ այս կեանքում: Քրիստոս սիրելով մարդկանց՝ ուսուցանումէ նոցա ժուժով բռնութեամբ իրանց անձը ապահովելուց նոյնպէս և սեպհականութիւնից: Ինչպէս սիրելով մարդկանց՝ ուսուցանումէ յետ կենալ կռուից և ալքեցութիւնից: Նա ասումէ թէ՝ ապրելով առանց ուրիշներին ընդդիմադրելու, մալդիկ աւելի բաղդաւոր կըլինին և իւր կեանքի սրինակովը հաստատումէ այս: Նա ասումէ թէ իւր վարդապետութեամբ ապրող մարդը պէտք է պատրաստ լինի ամենայն բոպէ մեռնել ուրիշի բռնութիւնից, ցրտից և սովածութիւնից, և չի կարող իւր կեանքի ոչ մի ժամի վերայ յոյս դնել: Եւ մեզ թւումէ այս իբրեւ ինչ ինչ զոհերի պահանջ. սակայն այս է այն պայմանների հաստատումն՝ որոնց մէջ ամեն մարդ անխուսափելի կերպով ապրումէ: Քրիստոսի աշակերտը պէտք է պատրաստ լինի ամեն բոպէ տառապանքի և մահի: Բայց աշխարհի աշակերտը մի՞թէ նոյն դրութեան մէջ չէ: Մենք այնքան սովոր ենք մեզ խաբելու, որ բոլորը՝ ինչ որ մենք անում ենք մեր կեանքի կարծեցեալ ապահովութեան համար՝ մեր զօրքերը, բերդերը, մեր մթերները, մեր զգեստները, մեր բժշկութեան եղանակները, ամբողջ մեր կայքը, մեր փողը, թւումէ մեզ իբրեւ իրական մի բան, որ ապահովացնումէ մեր կեանքը: Մենք մոռանում ենք այն, ինչ որ ակնյայտնի է ամենքին, ինչ որ պատահել է մի մարդու, որ մտածել էր ամբարներ շինել՝ իրան երկար ժամանակով ապահովացնելու համար՝ նա նոյն գիշերը մեռել էր: Ինչ որ մենք անում ենք մեր կեանքը ապահովացնելու համար, կատարելապէս նոյն է, ինչ որ անումէ ջալլամը, որ կանգնելով՝ գլուխը թագցնումէ, որպէս զի չըտեսնէ թէ ինչպէս իրան սպանում են: Մենք աւելի վատ ենք անում քան ջալլամը, մեր կասկածաւոր կեանքը կասկածօրէն ապահովացնելու կասկածաւոր ապագայում, մենք, անշուշտ, կորցնում ենք մեր հաւաստի կեանքը հաւաստի ներկայում:

Խաբէութիւնը կայանումէ սուտ համոզմունքի մէջ՝ թէ մեր կեանքը կա-

րող է ապահով լինել մեր ուրիշների հետ կուռելովը: Մենք այնքան սովոր ենք մեր և մեր սեպհականութեան կարծեցեալ ապահովութեանը մէջ իսարուելու, որ չենք նըկատում այն ամենը՝ ինչ որ կորցնում ենք դորա պատճառաւ՝ և կորցնում ենք բոլորը, ամբողջ մեր կեանքը կուլ է գնում կեանքը ապահովելու հոգսերով, պատրաստուելով նորա համար, այնպէս որ կեանք բոլորովին չի մնում:

Բաւական է միայն մի րոպէ հրաժարուիլ մեր սովորութիւնից և կողմնակի կերպով նայել մեր կեանքի վերայ, որ տեսնենք՝ թէ բոլորը, ինչ որ մենք անում ենք մեր կեանքի կարծեցեալ ապահովութեան համար, մենք անում ենք ոչ թէ նորա համար, որ մեր կեանքը ապահովենք, այլ միայն նորա համար, որ պարապելով նորանով՝ մոռանանք թէ կեանքը երբէք ապահոված չի՝ և չի էլ կարող ապահոված լինել: Սակայն բաւական չէ, որ մենք մեզ իսարում ենք և կորցնում ենք մեր ներկայ կեանքը երեւակայականի համար. մենք մեզ ապահովացնելու այս ձգտողութեան մէջ յաճախապէս կորցնում ենք այն՝ ինչ որ մենք կամենում ենք ապահովացնել: Փրանսիացիները զինուորավումէին իրանց կեանքը 70 թուին ապահովացնելու համար. և այս ապահովացումից կորչում են հարիւր հազարաւոր ֆրանսիացիներ, նոյնը անում են և բոլոր զինուորուող ազգերը: Հարուստը ապահովացրնում է իւր կեանքը նորանով՝ որ փող ունի, եւ նոյն փողը գրաւում է աւազակին, որ սպանում է նորան: Ասկածոտ մարդը ապահովացնում է իւր կեանքը բժշկութեամբ, և նոյն բժշկուելը դանդաղաբար սպանում է նորան, ինչպէս այն թուլացած մարդու, որ 35 տարի չապրեց, բայց սպասեց հրեշտակին աւազանի մօտ:

Քրիստոսի վարդապետութիւնը այն բանի վերայ թէ կեանքը չի կարելի ապահովացնել այլ պէտք է միշտ, ամենայն րոպէ՝ պատրաստ լինել մեռնելու, անտարակոյս աւելի լաւ է, քան աշխարհի վարդապետութիւնը, թէ պէտք է իւր կեանքը ապահովացնել. նորանով աւելի լաւ է, որ մահի անխուսափելի լինելը և կեանքի անապահովականութիւնը մնում է նոյնը թէ աշխարհի և թէ Քրիստոսի վարդապետութեամբը. բայց կեանքը ինքը Քրիստոսի վարդապետութեամբը ամբողջովին չի կլանվում դատարկ զբաղմունքով մարդու կեանքի կասկածելի ապահովութեան համար, այլ դառնում է ազատ և կարող է նուիրուել միայնակ իրան յատուկ նպատակին՝ իւր և մարդկանց երջանկութեանը: Քրիստոսի աշակերտը աղքատ կըլինի՝ այո՛, այսինքն նա կօգտուի միայն այն ամեն բարիքներից որը տուել է նորան Աստուած: Նա չի կորցնի իւր կեանքը: Մենք աղքատութիւն բառով որ արտայայտում է խեղճութիւն, կոչեցինք այն՝ ինչ որ բաղդ է յորջորջվում: Իրողութիւնը ինքը մտածեց չըփոխուեց: Աղքատ է՝ այս նշանակում է՝ նա քաղաքումը չի բնակուիլ՝ այլ գիւղում, չի նստիլ տանը, այլ կաշխատէ անտառում, դաշտում. կըտեսնէ արևի լոյսը, երկիրը, երկինքը կենդանիներին. չի մտածիլ՝ թէ ինչ ուտէ ախորժակը գրգռելու համար, այլ երեք անգամ օրը կըսովի. չի թաւալիլ փափուկ բարձերի վերայ և մտածիլ՝ թէ

ինչով պէտք է քնատութիւնից փրկուի այլ կրննջէ խոր քնով. երեխաներ կունենայ. նոցա հետ կապրի, ապա Տաղորդակցութիւն կունենայ մարդկանց հետ, իսկ որ գլխաւորն է ոչինչ այնպէս բան չի բռնիլ՝ որ սրտի ուղածը չըլիինի. չի վախենալ՝ թէ ինչ կը պատահի իրան. նա կը հիւանդանայ, կը տառապի, կը մեռնի. ինչպէս ամենքը (նայելով թէ ինչպէս հիւանդանումն և մեռնումն աղքատները՝ աւելի դիւրեաւ քան հարուստները) բայց նա անկասկած աւելի բաղդաւոր կապրի:

Պէտք է վերականգնեցնել բոլոր անեղծ մարդկանց մտապատկերը՝ թէ բաղդաւորութեան անհրաժեշտ պայմանը անգործութիւն չէ, այլ աշխատանքը. թէ մարդ չի կարող չաշխատել. թէ նորան ձանձրալի, ծանր և դժուար կըլինի չաշխատելը. ինչպէս ձանձրալի, դժուար է չաշխատելը մըրջիւնի, ձիու և ամեն կենդանու համար. Պէտք է մոռանալ մեր վայրենի սնապաշտութիւնը այն բանի մասին՝ թէ անսպառելի դրամ ունեցող մարդու վիճակը՝ բնական երջանիկ վիճակ է պէտք է վերականգնեցնել մեր մտքում աշխատանքի վերայ ունեցած այն հայեացքը որը անեղծ մարդիկ ունին նորա վերայ և որը ունեցել է Քրիստոս՝ ասելով՝ թէ աշխատողը արժանի է ապրուստի. Քրիստոս չէր կարող երեակայել մարդիկ, որոնք նայէին աշխատանքի վերայ. ինչպէս անէճքի, ուստի և չէր կարող ենթադրել մի մարդ, որ չի աշխատում և չի կամենում աշխատել. նա միշտ ենթադրումէ թէ իւր աշակերտը աշխատումէ. Ուստի և ասումէ՝ և թէ մարդս աշխատումէ, աշխատանքը կերակրումէ նորան. Եթէ այս մարդու աշխատանքը վեր առնէ մի ուրիշ մարդ, այդ ուրիշ մարդդ պէտք է կերակրի նորան, որ աշխատումէ. որովհետեւ օգտվումէ նորա աշխատանքից. Ուստի աշխատողը միշտ կունենայ ապրուստ:

Տարբերութիւնը Քրիստոսի վարդապետութեան և մեր աշխարհի վարդապետութեան մէջ աշխատանքի վերաբերութեամբ այն է, որ աշխարհի վարդապետութիւնովը աշխատանքը առանձին արժանաւորութիւնն է մարդու, որի համար հաշիւ է անում ուրիշների հետ և ենթադրումէ թէ իրաւունք ունի աւելի ապրուստի, որքան աւելի է աշխատանքը. իսկ Քրիստոսի վարդապետութեամբ գործը՝ աշխատանքը կեանքի անհրաժեշտ պայմանն է և ապրուստը նորա անխուսափելի հետեանքը. Գործելը յառաջացնումէ կերակուր կերակուրը յառաջացնումէ աշխատանք՝ այս յաւիտենական շրջանն է մինը հետեանք և պատճառ է միւսին:

Քրիստոսի վարդապետութեան համաձայն՝ իւրաքանչիւր մարդ առանձին առած՝ անկախ նորանից՝ թէ ինչպէս է աշխարհոյ, կունենայ ամենալաւ կեանք. եթէ նա իւր կոչումը հասկանայ՝ թէ պէտք չէ ուրիշից աշխատանք պահանջել՝ այլ իւր ամբողջ կեանքը դնել ուրիշների համար աշխատելու, իւր կեանքը տալ իբրեւ փրկանք շատերի համար. Այսպէս վարուող մարդը, ասումէ Քրիստոս, արժանի է ապրուստի, այսինքն չի կարող ապրուստ չըստանալ. Մարդ նորա համար չի ապրում, որ ուրիշները նորա օգտին աշխատեն, այլ որ ինքը աշխատէ ուրիշների օգտին՝ բառերովը, այն հիմն

է դնում, որ անտարակոյս ապահովացնումէ մարդու նիւթական գոյութիւնը, իսկ «աշխատողը արժանի է ապրուստի» բառերովը, Քրիստոս հեռացնումէ այն սովորական առարկութիւնը, որ կայանումէ նորանում թէ՛ Քրիստոսի վարդապետութիւնը կատարողը չըկատարողների մէջ կըկորչի սովածութիւնից և ցրտից: Քրիստոս ցոյց է տալիս թէ մարդս իւր ապրուստը ապահովացնումէ ոչ նորանով, որ ուրիշներից կըխլի ապրուստը այլ նորանով որ օգտակար և հարկաւոր կըլինի ուրիշների համար: Որքան կարեւոր է ուրիշների համար, այնքան ապահով կըլինի նորա գոյութիւնը:

Առարկութիւնը Քրիստոսի վարդապետութեան անկատարելի լինելուն գէժ, որը կայանումէ նորանում թէ՛ ես չեմ հայթայթի ինձ համար և չեմ պահպանի հայթայթածս, ոչ որ չի կերակրել իմ ընտանիքս ճշմարիտ է միայն այն մարդկանց վերաբերութեամբ, որոնք անդործ, անօգուտ՝ ուստի և վնասակար մարդիկ են: Քրիստոս ուսուցանումէ մարդկանց՝ թէ այսպէս գիտակցութեամբ պէտք է վարուեն կեանքի մէջ, որովհետեւ այսպէս է մարդուս և ամբողջ մարդկութեան օրէնքը: Աշխատանքը մարդուս կեանքի անհրաժեշտ պայմանն է, և աշխարհքը տալիս է մարդուս երջանկութիւն: Ուստի մ. ր և օտարի աշխատանքի պտուղները ուրիշ մարդկանցից պահելը արգելք է լինում մարդուս երջանկութեանը:

«Եթէ մարդիկ միմեանցից չըխլեն, նոքա կը մեռնեն սովածութիւնից» ասումանք մենք թուի թէ՛ պէտք է ներհակը ասած՝ եթէ մարդիկ ուժով կըխլեն միմեանցից կը պատահեն մարդիկ, որոնք սովածութիւնից կը մեռնեն, ինչպէս և է:

Եւրոքանչիւր մարդ, ինչպէս և ապրէր Քրիստոսի վարդապետութեան թէ աշխարհի վարդապետութեանը համաձայն, նա կենդանի է միայն ուրիշ մարդկանց աշխատանքով: Աւրիշ մարդիկ նորան և պահել են և խմեցրել են, և կերակրել են, և պահում են և խմեցնում են և կերակրում են: Քրիստոսի վարդապետութեամբ մարդս նոյնպէս պաշտպանուած, կերակրուած և խմեցրուած է ուրիշ մարդկանցից, սակայն սոքա համար՝ որ ուրիշ մարդիկ շարունակեն պահել, խմեցնել և կերակրել նորան, նա ոչ որին չի ստիպում այս անել, այլ ինքը աշխատումէ ուրիշներին ծառայել, որքան կարելի է օգտակար լինել ամենքին, և սորանով կարեւոր է դառնում ամենքի համար: Բայց միշտ բոլոր մարդիկ որքան և չար լինին՝ նոքա ժրջանութեամբ կը կերակրեն և կը պաշտպանեն իրանց համար աշխատողին:

Արդ՝ ի՞նչպէս է աւելի ճիշդը, աւելի խելօք և աւելի ուրախալի ապրել: Աշխարհի վարդապետութեան թէ Քրիստոսի վարդապետութեան համաձայն:

Երկ և և Տօլտալի, Թարգմ.Մ. Չարգարեանց: